Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղարի պաշտոնակատար պարոն Արկադի Խաչատրյանին

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **Քաղաքացիական ծառայողի անուն ազգանունը**.
   Աննա Մազլումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**.
   Կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**.

   Այցելություն Ղազախստանի Հանրապետություն, ք. Ալմաթի՝ 2023 թվականի հուլիսի 24-28-ը

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)**.

   Կարողությունների զարգացման նախաձեռնություն թափանցիկության համար - Գլոբալ աջակցության ծրագիրը (CBIT-GSP) և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը (CAREC):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**.

   Մասնակցություն Ազգային մակարդակով սահմանված գործողությունների (NDCs) առաջընթացին հետևելու համար մեխանիզմների մշակմանը նվիրված տարածաշրջանային սեմինարին.
   Սեմինարի նպատակն է

   - աջակցել տարածաշրջանային զարգացող երկրներին, որոնք պատասխանատու են Փարիզյան համաձայնագրի ներքո կլիմայի փոփոխության մեղմման և ազգային մակարդակով սահմանված գործողությունների հաշվետվություններ պատրաստելու և ներկայացնելու համար:
   - ծանոթանալ Փարիզյան համաձայնագրի ներքո իրականացվող կլիմայի փոփոխության մասին զեկույցների, հաշվետվությունների ձևաչափին,

- տեխնիկական գնահատականի բարելավման, մեղմման հետևանքների և հաշվետվայնության գործընթացի նպատակով ուսունասիրել գործիքների կիրառման միջազգային փորձը,
- թափանցիկության ընդլայնված շրջանակների (ETF) պահանջների համաձայն՝ գործնական փորձի ժամանակ ուսումնասիրել կոնկրետ օրինակներ, որտեղ կիրառվել են տեխնիկական գնահատականները, թափանցիկության հետևանքների ուսումնասիրումը և մեղմման հաշվետվայնության վերաբերյալ աշխատանքները,
- տեխնիկական գնահատման գործիքների և մոտեցումների կիրառման, գործընթացի հետևելու և մեղմման հաշվետվայնության մշակման վերաբերյալ փորձի փոխանակում,
- բացահատել ազգային փորձագիտական թիմերի միջև ընդհանուր մարտահրավերներն ու համագործացությունը՝ տեխնիկական գնահատման, գործընթացիներին հետևելու և մեղմման հաշվետվայնության հեռանկարների վերաբերյալ:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- Թափանցիկության ընդլայնված շրջանակներում (ETF) հաշվետվայնության ընդհանուր պահանջներ,
- ազգային մակարդակով սահմանված գործողություններին հետևելու վերաբերյալ գործնական վարժություններ (CTF աղյուսակներ),
- ազգային մակարդակով սահմանված գործողությունների ցուցանիշներ,
- ցուցիչների արժեքները՝ ըստ SMART սկզբունքների (վարժություն),
- ազգային մակարդակով սահմանված գործողությունների հետ կապված ընթացիկ նախաձեռնություններ, Մոնտենեգրո, Ղազախստան երկրների ներկայացումներ,
- երկամյա թափանցիկության զեկույցի գործիքների ներկայացում,
- ինչպես լրացնել CTF 1, 2, 3, 4 և այլն աղյուսակները և հավելվածները (վարժություններ),
- ՋԳ արտանետումների կանխատեսումները և սցենարները,
- ջերմոցային գազերի կանխատեսման համար աջակցող գործիքներ (GACMO և LEAP), կապող աղյուսակներ և ծրագրեր,
- տվյալների կարիքները և ինչպես հավաքել կամ լրացնել բացակայող տվյալները,
- ՊԳԿ-ի (FAO-ի) հաշվետվայնության գործիքների օրինակներ և կիրառում,
- ազգային մակարդակով սահմանված գործողությունների հետ կապված ընթացիկ նախաձեռնություններ, Հայաստանի, Մոլդովայի ներկայացումներ (պրեզենտացիա)
- CBIT տեղեկատվական հարթակի ներդրման նախագծի ներկայացում:

7. **Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղրղստանի, Ղազախստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի, Մոլդովայի, Ալբանիայի և այլ երկրների ներկայացուցիչներ: Ընդհանուր առմամբ հրավիրված էին մոտ 30 ներկայացուցիչ: Հայաստանից հանդիպմանը մասնակցում էին շրջակա միջավայրի նախարարությունից և ՄԱԶԾ-ից ներկայացուցիչներ (ընդհանուր առմամբ՝ 2 ներկայացուցիչ):

Հանդիպման երեք օրերի ընթացքում երկրների ներկայացուցիչներին տրվում էին վարժություններ և երկրները ներկայացնում էին իրենց տեսլականը և դիրքորոշումը ներկայացված հարցադրումների վերաբերյալ: Անցկացվում էին ինտերակտիվ խաղեր կլիմայի փոփոխության գիտելիքների վերաբերյալ և Հայաստանը ցուցաբերել է ակտիվություն և բարձր առաջադիմություն:

Հանդիպման ժամանակ ներկայացրել եմ Հայաստանի ազգային մակարդակով սահմանված գործողությունների հետ կապված ընթացիկ նախաձեռնությունները, մեղմման տեսանկյունից ՋԳ արտանետումների կանխատեսումները և սցենարները, ՋԳ արտանետումների նվազեցման տեխնիկական հնարավորությունները ըստ ոլորտների: Ներկայացման ժամանակ խոսել եմ Հայաստանի թափանցիկության շրջանակների նախադրյալներից:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Երկրների ներկայացուցիչները փոխանակվում էին փորձով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակից երկրներից միայն Հայաստանն ունի առվել փորձ կլիմայի փոփոխության մեղմման համատեքստում, կիսվեցինք նաև մեր փորձով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ձեռք բերվեց նոր գիտելիքներ և փորձ՝ կապված հաշվետվայնության աղյուսակների լրացման, առաջնահերթությունների վերհանման, կլիմայական գլոբալ նպատակներին հասնելու հետ:

*Գործուղվող՝* *Աննա Մազլումյան*

*02.08.2023 թ.*